ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

МЕРИЯ ЕРЕВАНА
"СКОРАЯ МЕДИЦИНСКАЯ ПОМОЩЬ"
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

№ 592
« 30 » 05 2024 թ.

Ք. Երևան, Հնդկաստանի փող. 40
Հեռ. +374 10 53-66-12

«ԱԳԱՍՏ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
ՀՎՀՀ՝ 00435781
հասցե՝ ք.Երևան, Տ.Պետրոսյան 31/1
էլ.հասցե՝ agastllc@mail.ru

Հարգելի տիկին Մուրադյան

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 08/01/2024թ. կնքված №ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-24/2-3 և 26/01/2024թ. կնքված №ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-24/2-8 պայմանագրերի շրջանակներում «Ագաստ» ՍՊԸ-ին 17/05/2024թ-ին պատվեր-հայտ է ներկայացվել №5, 6, 17, 19, 22, 23, 24, 27, 29, 48, 50, 51, 61 և 62 չափաբաժինների համար, սակայն ոչ մի չափաբաժնով սահմանված ապրանք չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել է 5 օրից ավելի: Տեղեկացնում ենք, «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն 2024թ. մայիսի 30-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը ընդհանրապես չմատակարարված ապրանքների մասով (ներկայացվում է ստորև):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք 2 (երկու) բանկային օրվա ընթացքում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Հ/Հ 1930066213490100-ին փոխանցել պայմանագրի կատարման գումար՝ 720.940 ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումար՝ 1.081.410 ՀՀ դրամ, **ընդամենը՝ 1.802.350 ՀՀ դրամ** գումարները և վճարված կտրոնները ներկայացնել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի գնումների բաժին:

չափ. համարը	անվանումը	չափման միավորը	Պայմանագրային քանակը	չմատակարարված ապրանքի քանակը	Չափաբաժնի նախահաշվային գումար	Չմատակարարված ապրանքի նախահաշվային արժեքը	10%	15%	Ընդ
5	Ամիոդարոն	ամպուլա	2500	2370	525000	497700	49770	74655	124425
6	Անալգին	սրվակ	80000	50000	3360000	2100000	210000	315000	525000
17	Նո-շպա	սրվակ	9000	6700	540000	402000	40200	60300	100500
19	Էուֆիլին	սրվակ	6000	3000	240000	120000	12000	18000	30000
22	Կորդիամին	սրվակ	2500	1750	425000	297500	29750	44625	74375
23	Կետոնալ	սրվակ	7000	3800	1260000	684000	68400	102600	171000
24	Կետորոլակ	հատ	8000	5610	800000	561000	56100	84150	140250
27	Մագնեզիումի սուլֆատ 25% 5մլ	ամպուլա	55000	28680	2200000	1147200	114720	172080	286800
29	Նատրիումի քլորիդ	ամպուլա	32000	16000	1216000	608000	60800	91200	152000
48	Անուշադրի լուծույթ	ֆլ	300	300	36000	36000	3600	5400	9000
50	Ձեռքերի ախտահանիչ միջոց	լիտր	20	20	36000	36000	3600	5400	9000
51	Էթանոլ	լիտր	420	210	504000	252000	25200	37800	63000
61	Կատետեր երակային 20G	հատ	5000	1800	300000	108000	10800	16200	27000
62	Կատետեր երակային 22G	հատ	8000	6000	480000	360000	36000	54000	90000
						ԸՆԴԱՄԵՆԸ	720940	1081410	1802350

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ